Սպասված ճամբար

Ծրագրի նկարագրություն

Երեխաների մեծամասնության համար ամառային ճամբարը դպրոցի ավարտը նշելու, արկածներ ունենալու և նոր ընկերներ ձեռք բերելու ժամանակ է: Դա կախարդական և հիշարժան փորձ է:

Երեխաների համար, ովքեր մեծ դժվարություններ են ապրել, (օրինակ՝ պատերազմի ժամանակ ծնողի կորուստը) ճամբարն ավելի մեծ նշանակություն ունի: Այն հնարավորություն կտա հոգեպես վերականգնվելու:

Ամեն տարի Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) հովանավորում է իր «Հայաստանի երեխաների հովանավորման» ծրագրի (ՀԵՀԾ) գեղեցիկ երկշաբաթյա ճամբարային փորձը 150-ից ավելի երեխաների համար: Մասնակիցները հիմնականում տարբեր դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներից են: Մեծ մասը սոցիալապես անապահով են: Ոմանք սիրիահայ փախստականների երեխաներ են, մյուսները՝ 2020 թվականի Ադրբեջանի հետ պատերազմում զոհված զինվորների երեխաներ:

Ճամբարի ընթացքում երեխաները ձեռք են բերում ընկերներ ողջ կյանքի համար: Նրանք սովորում և զարգացնում են նոր հմտություններ, տեսարժան վայրեր այցելում և մասնակցում են զվարճալի և հետաքրքիր միջոցառումների: Նրանք ֆիզիկապես ակտիվ են, կանոնավոր ու սննդարար կերակուր են ստանում:

Սահմանափակ ֆինանսական միջոցների պատճառով ՀՕՖ-ը ցավոք չի կարող բոլոր երեխաներին ճամբար ուղարկել: Մենք «Այո»-ի թիմով ցանկանում ենք բավականաչափ գումար հավաքել, որ առնվազն 75 երեխաներին, ովքեր կորցրել են իրենց հայրերին 2020 թվականի պատերազմում, տանք հնարավորություն մասնակցել ճամբարին: Մեզ անհրաժեշտ է ընդամենը 200 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր երեխայի համար:

Որքան շատ գումար հավաքենք, այդքան շատ երեխաների կկարողանանք մասնակից դարձնել (ցուցակում կա ևս 346 երեխա, ովքեր անհամբեր սպասում են): Ցանկանու՞մ եք նրանց տալ անմոռանալի կյանքի փորձ: Մենք ցանկանում ենք! Թող սկսվի ճամբարի համար հետ հաշվարկը:

Բյուջե

Ինչ	Երեխա	Օրերի քանակ	Մեկ օրվա արժեքը ՀՀ դրամով	Ընդամենը ՀՀ դրամ
Երեխաների ճամբար	75	15	6,500	7,087,500

Ընդհանուր

Փոխարժեք՝ 1 ԱՄՆ դոլար = 474.38 ՀՀ դրամ

֏7,087,500